Առաքեմք ողջոյն սիրո ի մէնջ և աւրհնութիւն առաքելական ի յաստուածընկալ սուրբ Նշանէս Վանկկոէ, և ի շնորհաբաշխ աջոյս մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և յերկնահանգէտ սուրբ աթոռոյս առաքել(ակ)ան. որոց արագահաս աքանչելագործ կարող զաւրութեամբն և աւրհնութեամբն պահպանեալ փրկեսջիք յամենայն վտանգից փորձանաց հոգոյ և մարմնոյ, տամբ և որդովք և ամենայն գոյիւք. ամէն։

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն մեր ի Քրիստոս Աստուած հավատարիմ ըստ հոգւոյ սիրեցեալ ցանկալի և պարծանաց որդիք և եղբարք, բազմաչարչար երկեամբք ծնունդք ավետարանաւն ի Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի յորժամ կամաւքն Աստուծոյ և մեր Սուրբ Լուսաւորչին աւժընդակութեամբն՝ հաստատեցաք ի վերայ գահոյից սուրբ աթոռոյս՝ կաթողիկոս ամենայն Հայաստանաց, նայ մեք ըստ հայրական հոգաբարձութեան [1] գթո մեր կամեցաք սիրովն Քրիստոսի զամենայն մեր ի Քրիստոս Աստուած հավատարիմ սիրելի որդիքդ հայրաբար հոգալ, եթէ ո՞րպէս կամ զիարդ էիք ուղղափառ աւրինաւք Սրբոյն Գրիգորի. քննել իսկ զամենայն վիճակս եպիսկոպոսաց և զաթոռունսն, թէ ո՞րք են այրի՝ կամ ո՞ր եպիսկոպոս ոչ ունի վիճակ և աթոռ եպիսկոպոսութեան։ Յաղագս որո իմացաք որ իմացաք [2] զի մեր նախնին ի Քրիստոս հանգուցեալն Տէր Կոստանդին՝ ձեռնադրեալ էր զպարոն Նասրատնին որդին զՏէր Յոհանէսն՝ եպիսկոպոս Լովիդ, Լուցկային և Մանքրմնա, և պարգեւեալ էր ձեզ զամենեսեան Տէր Յոհանէսիդ՝ ժողովուրդ սեփական, և շուրջաբերականաւ հաստատեալ։ Իսկ մեք իբրև ստուգիվ իմացաք որ այնպէս յոյժ սիրով էր ընկալ(եալ) մեր նախնին զՏէր Յոհանէսն, նայ եւ մեք կարի յոյժ պատվեցաք զհրամանս մեր նախնոյն Տէր Կոստանդնա՝ իբրև զառաջին սուրբ հարցն. և ծանեաք զի արժան էր Տէր Յոհանէս, որո զշնորհս զայս առնէաք նմա։ Ընդ որս և սոյն աղագաւ, և մեք իսկ մերով իսկ հոգեւորական բարձր հրամանաւն վերըստին հաստատեցաք զսիրելի և զհավատարիմ որդիս զՏէր Յոհանէս ձեզ եպիսկոպոս և հոգեւոր առաջնորդ։ Եւ որպէս էր յայնժամ, սոյնպէս և այժմն եղիցի։ Եւ մերով հայրապետական բարձր հրամանաւն դայ Տէր Յոհանէսս է ձեզ զատիմի [3] եպիսկոպոս սեփհական, և ոչ այլ ոք։ Վասն որոյ դուք ամենեքեան զպարծանաց և ըզսիրեցեալ որդիս մեր զՏէր Յոհանէսս՝ այնպէս կալջիք, որպէս թէ եկեալ առ մեզ, և աւգնականութեամբն Աստուծոյ նոր եկեալ առ ձեզ. ելեալ ի զրկաց մաւրս կաթուղիկէ, սիգաձեմ ընթացիւք որպէս զփեսա ելեալ յառագաստէ, գալ հրճուել ի վերա լանջաց նոր Սիոնի. և առաքելաբար շրջեսցի ի միջի ձերում, վարդապե(տե)լ, խրատել և ուսուցանել յաւրէնս և ի պատուիրանս Տեառն, կալ անարատութեամբ ի տուէ և ի գիշերի. Տալով զանձն

1. Բն. գրած է հոգվն, յետոյ Ն գիրն փոխեր է ի Ր. և բառին Ճանցորդը գրեր է յոՐՒՒՔՔՔ, մոռնալով Կ տառն ալ փոխելու ի Ր, որպէս զի կարդացուի հոգաբարյուրիւն։

2. Այսպէս կրկնած է իմացաք։

3. Թրք. զատիմ, արժանաւոր, յաջողակ, կամ առաջնորդ։